

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Անդրսահմանային Միացյալ Քարտուղարություն (ԱՄՔ) Մասնակցային Ֆինանսական Մոտեցման Փորձնական Ծրագիր Համակարգող Մարզային Խումբ (ՄՖՄ ՄԽ)

Կապան, 29 մարտի, 2012թ.

ԱՄՔ-ն և ՄՖՄ ՄԽ-ն հրավիրում են Սյունիքի մարզի բնակչությանը ներկայացնել փոքր դրամաշնորհների ստացման հայտ-առաջարկներ, որոնք կվերաբերեն գյուղական բնակավայրերում տնային տնտեսությունների և ընտանիքների կենսապայմանների բարելավմանը:

Հրավերի նպատակն է՝ խթանել գյուղական բնակչության գիտելիքների և գործնական փորձի օգտագործումը, որը կարող է նպաստել ընտանիքների կենսապայմանների բարելավմանը և զարգացմանը:

Կիրախուսվեն այն գաղափարները, որոնք միտված են գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների մակարդակում ծախսերի կրճատմանը, մթերային ապահովության բարելավմանը քանակական և որակական առումներով, լրացուցիչ եկամուտների հնարավորությունների ստեղծմանը: Հատկապես կողջունվեն այն գաղափարները, որոնք կունենան գործնական կիրառության համար նորարարական և մատչելի բնույթ:

Ներկայացվող հայտերը կարող են վերաբերել օրինակ տնամերձ հողամասերի մշակությանը, փոքրամասշտաբ ոռոգման արդյունավետ համակարգերին, ջեռուցման և էներգիայի սպառման արդյունավետ կազմակերպմանը, բարձրարժեք տնային արտադրանքի թողարկմանը, կանոնավոր զբաղվածության և եկամուտների լրացուցիչ աղբյուրների ստեղծմանը և այլն:

Ներկայացվող հայտերի մեջ հատկապես կկարևորվեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ուղղված առաջարկները:

Հայտերի ուսումնասիրությունն իրականացվելու է ՄՖՄ ՄԽ և հատուկ ձևավորված հանրային հանձնաժողովի կողմից: Հաշվի կառնվեն հետևյալ հիմնական չափանիշները.

1. Առաջարկվող գաղափարների կիրառելիությունը Սյունիքի մարզում,
2. Առաջարկվող գաղափարների իրատեսականությունը, արդյունավետությունը և մատչելիությունը,
3. Ներկայացվող գաղափարը առկա գործունեության հետ համատեղելու հնարավորությունը,
4. Գաղափարի ներկայացման և բացատրման ձևը, հիմնավորվածությունը և համոզիչ լինելը,
5. Բնապահպանական ուղղվածությունը:

10 լավագույն հայտատուներին կտրամադրվեն փոքր ենթադրամաշնորհներ՝ 25-150 հազար ՀՀ դրամի սահմաններում: Լավագույն հայտեր ներկայացրած թեկնածուները պետք է իրենց առաջարկները ներկայացնեն և հիմնավորեն կազմակերպվելիք հանրային միջոցառման ընթացքում: Այս միջոցառման մանրամասները թեկնածու հայտատուներին կներկայացվի լրացուցիչ:

Հայտերի ներկայացման ձևաչափն ազատ է. կարող են լինել գրավոր և բանավոր ներկայացումներ, նկարներ, էսքիզներ, հաշվարկներ, մանրակերտեր, բյուջեի հաշվարկներ, ցուցադրումներ կամ ներկայացման ցանկացած այլ եղանակ:

Հայտերը կարող են մինչև 2012թ. ապրիլի 15-ը՝ ժամը 18.00 ուղարկվել փոստով կամ ներկայացվել, առձեռն հետևյալ հասցեով.

ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան

Մարզպետարանի շենք,

Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին, 3 հարկ, 310, 311, 312 սենյակներ պրն. Թադևոս Ղազարյանին

Նշված օրից հետո ստացված հայտերը չեն ընդունվի և չեն դիտարկվի:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել.

0285 5-21-30, տիկին Կարինե Կոզմանյանին